

**ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՄՔԵՐԸ
ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ
ՎԷՊՈՒՄ**

ԱԿՒԿՕ ՀԻԿԻ

Ծով եւ լեռ. դժուար է նմանութիւն գտնել բնութեան այս երկու դըր-
սեւորումների միջեւ: Ծով. ալիքների մշտական շարժում, երբեմն ինչպէս
մօր արզանդում՝ անդորր եւ խաղաղ, երբեմն սարսափելի, կատաղի ալե-
կոծում. ճիշտ է, երբեմն լեռն էլ է ցնցւում, բայց սովորաբար անշարժ է,
ստատիկ ու վսեմ:

Քանի որ դարի կէսի հայ գրականութեան ինքնատիպ դէմքերից
մէկը՝ Կոստան Չարեանը (1885-1903) այս երկուսի խորհրդանշական տար-
բերութիւնը նուրբ ու խորը կերպով ցոյց է տուել եւ խորհրդածութիւններ
է արել նաւը Լճրան Վրայ վէպում: Գրողը անսահման սէր է ունեցել ծովի
նկատմամբ, թերեւս դա ունի իր արամարանական բացատրութիւնը. նա
սպրել է ծովափնեայ քաղաքներում՝ Յունաստանի Կորֆու կղզում, Կոս-
տանդնուպոլսում եւ այլ երկրներում, որտեղ ծով կար Անընդհատ թա-
փառելով մի երկրից միւսը, նա իր կեանքի շատ օրեր անց է կացրել նաև
վրայ Չարեանը նաև մէջ արբութիւն էր տեսնում: Ըստ նրա՝ «Օկիոցեցին
եւ նաւը նոյնանման են, որովհետեւ աստուածային բնոյթն են բնորո-
շում»¹: Չարեանի համար ծովի դերն այնքան մեծ է, որ նա գրել է. «Ծովի
հետ ունեցած իր յարաբերութիւնից կարող է բնորոշել մարդը, կարելի է
բնորոշել ժողովուրդները»²: Նրա համար՝ ծովի հետ կապ չունեցող մարդը
սահմանափակ է: Եթէ մի հայնացք զցենք պատմութեան հին օրերից մին-
չեւ այսօր, ապա կարելի է հասկանալ Չարեանի իւրօրինակ ձգտումը դէ-
պի ծովը եւ թէ ինչպէս է նա կարեւորում ծովի դերը մարդու եւ պետու-
թեան համար: Բոլոր ժամանակներում, բնդհուպ մինչեւ այսօր, շատ աւե-
լի ազդեցիկ է եղել այն երկիրը, որն ունեցել է աշխարհագրական այդ ա-
ռաւելութիւնը: Այդ պատճառով հասկանալի է դառնում վէպում արտա-
յայտուած այն գաղափարը, թէ նոյնիսկ լեռների մէջ ծուարած Սեւանայ
լիճն բնդունելով որպէս Հայերի համար միակ ծով, փորձ է արուել գոնէ
մի փոքրիկ նաւատորմի ստեղծել, որը թէկուզեւ ոչ այնքան զգալի, բայց
որոշակի օգուտ կարող է բերել: Այլ կերպ ասած, Չարեանը փորձ է արել
իր վէպում ցոյց տալ ազգային ինքնագիտակցման եւ ոգու արթնացման
ճանապարհներից մէկը, որին պէտք է հասնել՝ յաղթահարելով բազում
խուժիր ու դժուարութիւններ:

Նաև Լեռան վեպը Չարեանի բաւազոյն գործերից է, որ առաջին անգամ հրատարակուել է 1943ին, Բոստոնում: Այնուհետեւ խորհրդահայ գրաքննութեան Հարկադրանքով եւ միջամտութեամբ վէպի զգալիորէն փոփոխուած տարբերակը լոյս է տեսել Երևանում՝ 1963ին (Վերահրատարակուել 1985ին՝ Երկեր ժողովածուում): Մեր ուսումնասիրութեան Համար Հիմք ենք ընդունել բոստոնեան հրատարակութիւնը, քանի որ, ինչպէս յայտնի է, Չարեանն ինքը չի ընդունել երևանեան խեղաթիւրուած հրատարակութիւնը: ԵՍՍՍ ուզում եմ իմացուի, որ ճշակօք երկրորդ հրատարակութիւնը լոյս է տեսել ճշման, խարէութեան եւ սպառնալիքի տակ: Երկրորդ հրատարակութեան վերջին մասը բոլորովին աւելորդ է, ինչպէս նաեւ շատ փոփոխութիւններ վէպի ներսում: ...[Ուզում եմ իմանան, որ իմ գրած վէպը այն է, ինչ որ տպուած է արտասահմանում (չառաննշան փոփոխութիւններով) եւ իմ մահից յետոյ երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն երկրորդ հրատարակութիւնը՝:

Վէպի նիւթերը Չարեանը Հաւաքել է կովկաս ալքիլած (1919) եւ Երևանում ապրած ժամանակ: Նա Երևանում առաջին անգամ բնակութիւն է Հաստատել 1922-1924ին, որից յետոյ ապրել եւ ճամփորդել է Սւրուպայի տարբեր երկրներում, 1944-1948ին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Նորաստեղծ Խորհրդային Հաստատում նա իրեն ճնշուած էր զգում, միայնակ ու հարծուած՝, վէպի առաջին հրատարակութիւնը դրանից քսան տարի անց է լոյս տեսել: Այս Հարցի կապակցութեամբ Չարեանը բացատրում է թէ՛ «Տպագրութիւնները ժամանակ են պահանջում Հասունանալու: Համար: Բացի դրանից ինձ պէտք էր գրելու շարժառիթ: 1936-37ականների դէպքերը՝ Պանջեանի, Չարնեցի, Բակունցի եւ այլոց մէկը միւսի հետեւից անհետանալը, ինձ յուսահատեցրեց: Ես տեսայ, որ դարձեալ մեր վէրքը լայնորէն բացուած է՝: Փաստորէն գրողը, տեսնելով ստալինեան Հայտանքները, մտահոգուած էր, որ արտօնահական վէրք Հայաստանին դարձեալ բացուած է, եւ կարիք է զգացել գրել հայ ոգու մասին:

Վէպն իր բովանդակութեան եւ գաղափարների արտայայտութեան առումով բազմաշերտ է: այն պարունակում է պատմական ու քաղաքական գաղափարներ, հայ ոգին բնորոշելու տարբեր ճանապարհներ, մարդու եւ բնութեան յարաբերութիւնների հոգեբանութիւնը եւ այլ փիլիսոփայական խոհեր: Վէպի Հիմքն են կազմել 1918-1920ականների իրադարձութիւնները՝ առաջին հանրապետութեան ծնունդից մինչեւ նրա փլուզումն ու Սովետական Հայաստանի ստեղծումը, սրանց հետ կապուած՝ երկրի քաղաքական, սոցիալական իրախնական ու ժողովրդի հոգեբանութեան բազում ելուէջումներ՝ միշտ նպատակ ունենալով բացայայտել հայ մարդու հոգեւոր արժէքներն ու ոգեղէն թուիլները:

Վէպը սիւժէտային առումով շատ պարզ է: Մի կողմից գլխաւոր հերոս նաւապետ Արա Հերեանը մեծ ջանք է թափում իր նաւը Բաթումից մինչեւ Սոււանայ լիճ Հասցնել, միւս կողմից, երեսասարդ ծովային սպայ թումանեանը Սոււանում իր ձեռքով փորձում է նաև կառուցել: Այս պատմութիւնը Ջարեանն արդէն ներկայացրել էր *Անցորդը Օւ Բր Ճամփան* յուշագրութեան մէջ, բայց դա ընդամէնը պատասիկ էր եւ ոչ թէ ամբողջական գործ:

Այս կերպարներից բացի վէպում Հանդէս են գալիս բազմաթիւ այլ երկրորդական հերոսներ՝ Հայաստանի պետականութեան գործի նուիրեալներ (ուզմական գործիչներ Բարկէն Միրանեան, Մազմանեան, բժիշկ Ուլանեան, Հեղկահայ Պետրոս Մարկ, նախկին դերասան Պերոնեան, Աւակիմ Մարտիրոսովիչ թումանեան), գլխաւոր հերոսի շրջապատը կազմող մարդիկ (Ֆէօդոր Պանտելէելոյ, երեք անտուն տղաները), ինչպէս նաեւ նրա սիրած աղջիկները (ուուս Դաշենկա, տանտիրոջ դուստր Զուարթ, օր-խորդ Բուդաղեան), դրուագային այլ հերոսներ (մոլորկանուհի Անաստասիա եւ նրա Հայրը, տիկին Վարիա Միրանեան, երեւանցի քաղցնիկներ):

Վէպում հեղինակը տարբեր Հանգամանքներում ու վայրերում յիշում է պատմական տարբեր դէմքերի, երբեմն կերտելով պատմական իրական անձների կերպարներ:

Թիֆլիսի սրճարանում Հերեանի ընկերը՝ Պերոնեանը, նրան ծանօթացնում է Կարային՝ Փուտուրիստ՝ բանաստեղծին: Կարան Հաւանութիւն է տալիս Հերեանի նաւային ծրագրին, եւ գովարանում նրա «Փուտուրիստ ոգին»: Բայց Կարայի կողքին նստած ընկերը չի կարող տանել Կարայի ո՛չ արտաքինը, ո՛չ էլ դադափարները: Նրա Համար ամէնից առաջ անտանելի է Կարայի մօտեցումը Փուտուրիզմին: Նա փորձում է միայն արտաքինապէս նմանուել Փուտուրիստի: Եւրոպայում նոր ծնուած Փուտուրիստներն իրենց արտաքինով էլ Հասարակութեան մէջ անընդունելի էին: Նրանք ընկրկում էին իրենց թթի ծայրերը, ստեղծելի պահներ էին Հագնում, կազմքի շքանշաններ էին կախում⁵: Նրանց խրատիպ կամ տարօրինակ ճաշակը հմայում էր «հատերիկ աղջիկներին»: Կարան էլ նմանում է այդ Փուտուրիստներին լոկ արտաքին առումով. նա Հագնում է երկար, գունաւոր շապիկներ, բարձր կոշիկներ եւ ափղան գլխարկ է կրում:

Ջարեանը Կարայի կերպարը վերցրել է Փուտուրիստ բանաստեղծ Կարա Դերմիրչից, որին անձնապէս ճանաչել է: Կարան (խկական անունով՝ Յակոբ Գենջեան) ծնուել էր 1872ին, Ստաւրոպոլում, 1910ականներից տարուել Փուտուրիզմով եւ փորձել իր ստեղծագործութիւններով այդ ուղղութիւնը տարածել Հայ դրականութեան մէջ: Մահացել է 1930ին:

Չարեանի իրական տպաւորութիւնը կարա Դերվիլից գտնուի ենք նա-
եւ Անցորցը Եւ Իր Ճամբան ստեղծագործութեան մէջ: ՎՄՆ սինեմայի
դրան առջեւ կարա-Դէրվիլը իր բանաստեղծութիւններն է ծախում եւ
բաց նամակները կարան եզակի երեւոյթ է մեր իրականութեան մէջ: Հե-
րոս, իր տեսակին եւ, ամենայնդէպս՝ բմբոստ: Նա ընկերային նախապա-
շարուածներէն դուրս մի մարդ է, ո՛չ տաղանդից եւ ո՛չ ընդհանուր զարգա-
ցումից զուրկ՝: Չարեանը նոյն ստեղծագործութեան մէջ նրան գնահա-
տում է. «Նա է իսկական դէրվիլներն եւ աշուղներն յաջորդը, նա է քա-
նաստեղծի պատիւը պահում, նա է մեր խղճը»²⁰: Ինչպէս Նաւուում, Ան-
ցորցըում նոյնպէս եւ Իւրատիպ է կարայի արտաքինը: Քրքեստանի,
գմբէթաձեւ, սակիներով հիւսուած մի գլխարկով, մեծ վերարկուն ուսե-
րին, ճերմակ շապիկ հագած»²¹:

Կարայի ստեղծագործութիւնները, լուրջ արժէք չներկայացնելով, Հայ
գրականագէտների ու գրողների կողմից չեն արժանացել բարձր գնահա-
տականի Սահայն Չարեանը, որին այնքան խորթ են կաղապարները, Վեր-
ձօրէն գնահատում է մտաւորական միջավայրում բոլորից տարբերուող
կարային, նրա մէջ տեսնելով բանաստեղծի հպարտութիւնն ու յամուռ-
թիւնը, որոնք կրքեք ժամանակի միտումներին չեն գիշում: Փաստօրէն
կարայի կերպարը վէպի սիւժէին չի ազդում. նա այն ժանամանակուայ
ԹՂՔիտի մտաւորականների ու արուեստագէտների մտքերը ցոյց տուող
մի կերպար է: Չարեանը վէպում կարայի կերպարը յաւելի է՝ որպէսզի
ժամանակի շունչը կրող մի Հայ մտաւորական տեղ ունենայ վէպի համալ-
նապատկերի մէջ:

Նաւը Հերան Վրայ վէպում Խրիմեան Հայրիկի դրուագով Չարեանը
հեղինակելով է պատկերում տուեալ ժամանակի Հայրենասիրութիւնը:
Խրիմեանը եղի է Ամենայն Հայոց կաթողիկոս 1806ից 1907: Նա ազգային
պահպանողականների գաղափարական առաջնորդն էր: Վէպում Վաս-
պուրականից եկած ծերունին՝ Սեմիոն բիճան, պատմում է Խրիմեան Հայ-
րիկի կատարած «հրաշքի» մասին, որին ինքն անձամբ ներկայ է եղել: Ըստ
ծերունու, գիւղում լուր է տարածուել, որ Ալլակերպութեան տօնի առթիւ
Խրիմեանը Վարազայ վանքում պատարագ է մատուցելու եւ այդ առթիւով
բանալու է Արծրունիների տունի թաղաւոր Սենեքերիմի²² գերեզմանը:
Չտեսնուած մի Հայրենասիրական շունչ անցաւ քաղաքի եւ գիւղերի վրա-
յից: Ամէն ինչ մոռացան եւ ամէն ոք ոչեւորուեց: Այդպիսի մի դէպք ամէն
օր չի պատահում եւ, բնական է, ամէն մարդ ուզեց ներկայ գտնուել հան-
դիսաւոր եւ պատմական այդ արարողութեան» (էջ 190):

Հետաքրքրական է պատարագի վերջին մասը: Խրիմեանը աղօթելուց
յետոյ, հեկեկալով ծնկի է դալիս, վանքում թաղուած Արծրունի թաղաւոր
Սենեքերիմի ոսկորներից մի բուռ է վերցնում եւ արտայայտում իր յուսա-

Հասույթիները «Մինչև ե՞րբ սիրեցեալ թո ժողովուրդը պիտի մնայ որր... Գաղզ պարսպ է, եւ մեր սրտերից արինն է կաթում... Թշնամիները երկիրդ ոտնաւար են անում, քաղաքներդ քանդուկ են եւ ամրոցներդ փոշի են դարձնել... Ի՞նչ պիտի անի Հայաստանը, Արծրունի՛ Սննեքերի՛մ, ո՛ր թագաւոր Հայկաց, ո՛ր խաչակիր իշխան» (էջ 192-193): Այդ լսելով Հաւաքուածները ցնցուած են, կանայք ուշաթափուած են, երեխաները լաց են լինում: Արարողութիւնից յետոյ բոլորը վազում են գերեզմանի մօտ, Համբուրում քարերն եւ աղօթում թագաւորի Համար:

Մերունու պատմածներն ունեն պատմական Հիմք: 1023ին Սննեքերի՛մը Հաղանդուկիով Բիւզանդիայի Բարսեղ Բ. կայսրին, երկրի գահը եւ տարածքը յանձնել է նրան: Փոխարէնը Սննեքերի՛մին յատկացուել է Սերաստիա քաղաքը, որտեղ նա ընտանիքով ապրել է մինչև մահը: Վարապայ վանքում իրօք թաղուած է Սննեքերի՛մ Արծրունի թագաւորն իր կնոջ հետ:

Ըստ անպիսացի գրող Հինչի Լինչի, որ Վան է այցելել 1898ին, Սննեքերի՛մի գերեզմանի վրայ կանգնեցուած էր փայտեայ ծածկ, որը թագաւորական զարդ ունէր: Այդ զարդերը Խրիմեանի կարծիքով բոլորովին անբոլոր էին, Սննեքերի՛մն արժանի չէր դրան: Խրիմեանի Հայրենասիրական ոգին թույլ չէր տալիս Սննեքերի՛մի պէս մարդուն փառաւորել, քանի որ նա օտարին է յանձնել Հայրենի Հողը: Խրիմեանը հանել է այդ զարդարանքը, եւ շինութիւնը մերկ է մնացել: Լինչը վկայում է, որ մի վարպետից անդեկացել է այն մասին, որ Խրիմեանը մինչև անգամ ցանկանում էր գերեզմանափոսից հանել Սննեքերի՛մի մասունքները¹⁵:

Ջարեանի վէպի այդ դրուպն ամէնից աւաջ մի առիթ է՝ ցոյց տալու Վարապայ վանքում Հաւաքուած գիւղացիների միամտութիւնը: Դա ժողովրդի չգիտակցուած Հաւատն է: Վէպում դա ներկայացուած է Պետրոս Մարկի կողմից արտայայտուած Հետեւեալ մտքով. «Հայոց ազգը... կորցրել է ճանապարհը, եւ պահել է միայն սովորութիւնները... կորցրել է Ոգին եւ պահել է ձեւը... Մենք պարտուած ենք» (էջ 85): Սեմիոն բիճայի շուրջ Հաւաքուածները չգիտէին Սննեքերի՛մի անունը, սակայն մի մարդ կարեւորում է այն փաստը, որ Սննեքերի՛մը Հայոց թագաւոր է եղել: Հաւաքուած գիւղացիներն էլ չեն հասկանում Խրիմեանի այս արարողութեան իմաստը՝ այն ընկալելով որպէս սուրբ արարողութիւն:

Խրիմեանի խօսքերը բիճայի Համար շատ Համոզիչ էին, ոչ միայն պատարագի պահին, այլև յետագայում: Այդ պատմելիս՝ Սեմիոն բիճայի առջև վերակենդանանում են Վանի ընտիւթիւնը, աղբիւրի Համեղ ջուրը, գեղեցիկ ծաղիկները, եւ իր կորցրած Հայրենիքի մասին մտածելով՝ նա տիրում է եւ չի կարողանում շարունակել պատմութիւնը: Նա անպայման ուզում է մեռնել Վասպուրականում, որը Հիմա գտնուում է թշնամու ձեռքում: Բիճայի շուրջ Հաւաքուածներն էլ լաւ հասկանում են նրա վիշտը,

քանի որ հիմա «վարազը պատ պարապ է» տանիկները վանքը քանդել են և վանքը, եւ բոլոր դիւղերը, եւ բոլոր հինադար եւ գեղեցիկ եկեղեցիները տանիկները փլել են, փռլի վերածնելու Եւ այստեղ, Հայաստանի պատմական զաւառներում, հիմա ձիւն է եւ քամի է սաստիկ եւ պարապութիւն է, անապատ, մեծակութիւն» (էջ 194): Սեմիոն բիճայի միջոցով Չարեանը Հայի մի տիպիկ կերպար է ներկայացրել, որի հայրենասիրութիւնն առաջին հերթին առնչուում է իր բնակած տարածքին, նախնիների յիշողութեանը եւ առաջիկայ ազգային բաղձանքներին:

Վէպի երկու նաւագետերը՝ Արա Հերեանը եւ Միխայիլ (Միշա) Թումանեանն ունեն իրենց նախատիպերը՝ Հեղինակն իր յամենն ամփոփ կերպով պահպանել է Անցորդը Եւ Իր Ճամփան գործում: Անցորդում Չարեանը պատմում է Բեսարաբիայից Հայաստան եկած մի Հայի մասին: Յիսուսի մօտ արդ մարդը դժուարութեամբ է խօսել Հայերէն, եկել է Հայաստան իր միակ զաւակի հետ հայրենիքին ծառայելու նպատակով, որովհետեւ. «[Վ]երջին դէպքերը արթնացրել են նրանց մէջ հայրենասիրական անկեղծ զգացում»²¹: Այսինքն, նրանց եւ Թումանեանի ու Հերեանի Հայաստան գալու շարժառիթը նոյնն է: Բեսարաբիայի Հայի տղան ունի ուժեղ կամք եւ անձնուէր ձգտումներ հայրենիքին ծառայելու համար: Նա չի սպասում որ երկրում իրավիճակը փոխուի: Նրա հայրը հպարտութեամբ պատմում է. «Հայաստանը դեռ ծով չուներ, ուստի՝ զաւակս բարձրացաւ եւ գնաց լիճը փնտռելու: Մեծ լիճ է, կարելի է նաւարկել, բայց նաւ չկայ: Նաւ չկայ... Ուստի՝ զաւակս որոշեց նաւ չինել»²²: Երիտասարդը նախ համար պիտանի շինանիւթը մեծ դժուարութեամբ է հայթայթում, պատուում, ցեխոտ կոշիկներ հագած, ոտքով գնում ու գալիս է Երեւան, քանի որ փող չուներ Երիտասարդի՝ Միշայի ֆանքերի շնորհիւ հնարաւոր է դառնում «Տիգրան Երկաթ»²³ նախ նաւարկումը Սեւանայ լճի վրայ Սակայն մի քանի տարի յետոյ, նրա հայրը՝ ծերացած, հիւժուած, պատուում հագուստով, պատմում է, որ իր տղան սպանուել է բողեւիկների կողմից, եւ ինքը շուտով պիտի վերադառնայ Բեսարաբիա:

Միշան նաւը վէպում հանդէս է գալիս որպէս Միխայիլ Թումանեան, իսկ «Տիգրան Երկաթ» նաւը դարձել է Աչոտ Երկաթ»²⁴: Հերոսի արտաքինը նոյնն է. «[Մ]ինչեւ ոտքերը ընկնող սեւ մի վերարկու հագած, ձեռքում երկաթէ մի եռանկիւնի բռնած, նիւար, բարձրահասակ» (էջ 84) մի մարդ էր Թումանեանը՝ «մաշուած, կարկատուած, խեղճ կոշիկներ հագած»:

Կան նաեւ «Աչոտ Երկաթ» ու «Արատրոս»²⁵ նաւերի հետ կապուած փաստեր ու պատմութիւններ: Նախ մասին նիւթի հիմքը, ինչպէս նշուում է Անցորդում, Չարեանը վերցրել է անանուն գրուցակցի պատմածներէից:

«Աշոտ Երկաթ» ռուսագրանալիք գոյութեան մասին կան տարբեր վկայութիւններ¹⁸։ Յայտնի է, որ այն իրօք կառուցուել է ռուսական նպատակներին ծառայելու համար։ 1918ին Դաշնակցական իշխանութիւնը պահապանել է Ելենովկա¹⁹ գիւղում նաւատորմի ստեղծել, եւ նաւաշինութիւնը սկսուել է 1919ի Մայիսից²⁰։ Պատմական փաստաթղթի վկայութեամբ՝ 1920ի Յունուարի դրութեամբ «Աշոտ Երկաթ» նաւի կառուցումն աւարտուած է եղել, եւ այն իջեցուել է ջուր։ Վէպում նաեւ նկարագրուած է «Աշոտ Երկաթ» ռուսագրանալիք հանդիսաւոր բացման արարողութիւնը։ Այն շատ հանդիսաւոր եւ պաշտօնական է եղել, իշխանութիւնից էլ մարդիկ են եկել։ Հայրենիքին ծառայելու նուիրական նպատակն իրագործուած է, ուրիմն չարչարանքը արդիւնք է տուել։ Չարեանն այս արարողութեան ընթացքում ներկայացնում է Թումանեանի ու Նրա Հօր միջեւ առկայ խորը կապը։

Իսկ ի՞նչ նպատակով է կառուցուել նաւը, եւ ինչպիսի՞ հնարաւորութիւններ է ունեցել «Աշոտ Երկաթ»ը։ Այն ծառայել է գինուորական բեռների փոխադրման եւ լծի ափերի գծագրման աշխատանքների համար։ «Աշոտ Երկաթ» նաւի նուազագոյն բեռնատարողութիւնը եղել է 1000 փութ, իսկ գէնքը՝ մէկ թնդանօթ, երկու գնդացիք եւ յուսարձակ²¹։ Վէպում Թումանեանը տալիս է այս հարցի պատասխանը։ «(Այնտեղից Ազրբէջանի թրքերը կարող են մեզ կրակի տակ առնել եւ բաւականին մեծ գնաս պատճառել։ 16ի եզերքները ամրապնդուած չեն... Թնդանօթով գինուած մի նաւակ, որ կարողանայ փոքրիկ մի մեքենայի միջոցով արագ շարժել, նրանց պիտի հասցնի բաւականին մեծ գնաս... Դա, անշուշտ, մի մեծ բան չի, կապիտան, սակայն արհամարհելի էլ չի...» (էջ 88)։

Իսկ վէպում արդեօ՞ք «Աշոտ Երկաթ» նաւը ծառայել է իշխանութեան նպատակներին։ Չարեանը գրում է, որ երբ սկսուել էր բոլշեւիկների գործունէութիւնը, «Աշոտ Երկաթ» նաւը «Թագնուած էր կղզու բարձրութիւնների ետեւ եւ կրակում» (էջ 408)։ Այսպիսով, կարելի է ասել, որ «Աշոտ Երկաթ»ին, ըստ Թումանեանի խօսքերի, առնուազն յաջողուել է վախեցնել թշնամիներին եւ խանդարել նրանց աշխատանքները։

Թումանեանն ու «Աշոտ Երկաթ» նաւը բոլորովին մենակ են մնում ճակատագրական այն պահին, երբ բոլշեւիկները, որոնք արդէն հռչակել էին Հայաստանի խորհրդայնացումը, մօտենում են Ելենովկային։ Նրանք մտադրում են սպանել Թումանեանին։ Նրա սիրած աղջիկը՝ Անաստասիան, այլեւս նրա մօտ չի գալիս, որովհետեւ հայրը, իմանալով երկուսի յարաբերութիւնները, աղջկան սննեակում փակում է՝ մոլոկանների պատիւը չտեսահարելու համար։ Պարզապէս, մոլոկանների համար բոլշեւիկեան յեղափոխութիւնը ցանկալի էր, եւ այդ պատճառով Անաստասիայի հայրն արգելում է նրանց մօտիկութիւնը։ Նաւատիները, որոնք Թումանեանի

հետ միասին աշխատել էին, ոչինչ չասելով նաևագետին՝ գիշերանց փախ-
չում են:

Թումանյանի համար այդ ամենը անսպասելի է: Այս միայնութիւնը
կարելի է համեմատել Հերեանի այն զգացմունքի հետ, երբ մայրսեան ա-
պստամբութեան ժամանակ պարզուամ է, որ գիւղացիները պաշտպանում
են բոլորիկներին միայն այնպիսի համար: Նրանց խանդավառութիւնն ի
վերջոյ միակողմանի է: Կեանքի կարեւոր պահին ոչ ոք Հերեանին ու
Թումանյանին չի օգնում: Վերջինիս մասին Զարեանը գրում է, որ նա եւս
ոգի չէր շահագործել: Ինքը քայլել էր պատուած կոշիկներով, սպրել էր
հաց ու պանիրով, մրսել էր, չարչարել, գիշերները չէր քնել... Սիրել էր իր
դժբախտ հարցնիկը եւ պաշտպանել էր նրան...» (էջ 634):

Ըստ հուսկան, Թումանյանի կամ Հերեանի նման մարդկանց միշտ
խանդարում է մի գաղափար, որը վէպում արտայայտում է կերպարներից
մէկը. «Մեռնել անկախութեան համար՝ դեղեցիկ գաղափար է, բայց ան-
կախութիւն ունենալ մեռնելու համար՝ յիմար գաղափար է...» (էջ 392):
Նաև՝ ըստ Թումանյանի կամ Հերեանի, ինքնանուիրումը հասնում է
ինքնամոռացման, եւ նրանց չարչարանքը արդիւնքում իզուր է անցնում:
Ինչպէս Անտրոզը մէկ պատմուածք, Նաւթում եւս Թումանյանը գնդակա-
հարուել է բոլորիկների կողմից: Բայց այդ մասին կայ միայն առաջին
ընտանեան հրատարակութիւնում:

Թումանյանի կերպարը Զարեանը վերցրել է իրական անձից: Ահա թէ
ինչ է վկայում Սիմոն Վրացեանը իր յուշերում: 1820ի զարեանը Վրացեա-
նը գնում է Ելենովկա եւ տեսնում մի երիտասարդ ծոփալին սպայի «Դի-
տում ենք նաւաշինարանը եւ նորաչէն «Աշոտ Երկաթ» ճաղմանաւթ թե-
րուարտ կմախքը Երիտասարդ սպան հպարտութեամբ բացատրում է:
Հայաստանի նաւատորմիդի առաջին միաւորն է, որի կառուցման բախտը
իրեն է վիճակուած: Ռազմանաւը ունենալու է երկու թիֆեւ թնդանոթներ
եւ լիտուն նաւաստիներ: Այսքանը բաւական էր Սեւանի եզերքներին խա-
ղաղութիւն պահելու համար»²⁰:

Վրացեանի վերոյիշեալ խօսքերը Նաւթ վէպում դրսևորուած են Հեր-
եանի ու Թումանյանի առաջին հանդիպման տեսարանում: Սեւանում
Հերեանը տեսնում է մեծ նաւի կմախքը. «Հիմքերը լաւ էին դասաւոր-
ւած: Տաշւած փայտի, ժտակայ ջուրի եւ խայծղանի հոտը նրան մեծ հա-
ճուք պատճառեց» (էջ 63): Թումանյանը նաւը շինելու նպատակն էլ է
յայտնում. «(Այլմէ, երբ բանակը գրկւած է ամենատարրական միջոցնե-
րից, այդպիսի անկատար մի նաւ էլ կարող էր որոշ ծառայութիւն մա-
տուցանել» (էջ 65):

Սակայն Վրացեանի նշուած անունները շփոթմունք են պատճառում:
Վրացեանի նոյն յուշերում յստակ նշուած է, որ Բեսարաբիայից եկած այս

երիտասարդը «Կոստան Ջարեանի նաւապետ Հերեանի նախատիպն»²⁵, Ըստ Վրացեանի, այս անձուանալի ծովային սպայի անունը Գարագաշեան է, եւ գրքում անգամ գետեղուած է գեղեցիկ համազգեստով նրա լուսանկարը, որը Վրացեանի մի ուրիշ գրքում էլ կայ²⁶։ Նա ներկայացուած է որպէս «Հայաստանի Հանրապետութեան բանակի ծովային սպայ կար-Գարագաշեան, Սեւանայ նաւաշինարանի պետ»²⁵։ Այս նոյն գրքում Վրացեանը նշում է, որ 1920ին Սեւանի նաւազնացութեան ոգին են եղել Մամուրն ու Թումանեանը՝ Նա ներկայացնում է նաեւ Թումանեանի կենսագրութիւնը, որը նոյնն է, ինչ Նաւը վէպի Թումանեանինը²⁶։ Ինչ վերաբերում է Մամուրին, ապա Տիգրան Մամուրը եղի է Սեւանի նաւազնացութեան կազմակերպիչներից մէկը, Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի անդամ-նա սպանուել է 1921ի փետրուարեան ապստամբութեան ժամանակ²⁶։

Անցորդում Ջարեանը պատմում է նաեւ մի ուրիշ նաւապետի ու նաւի մասին, որն երկար ժամանակ լքուած էր Երեւանի կայարանում՝ ձմեռը ձկնով ծածկուած։ Իշխանութիւնը Սեւ ծովից եկած մի նաւապետի յանձնել է այդ նաւը վերանորոգելու եւ Սեւան տեղափոխելու գործը՝ Նաւապետը վազոնից իջեցնում է նաւը, եւ մեծ շարժարանքով տանում է մինչեւ Սեւան՝ Աստաֆեան փողոցով, Քանաքեռով, բլուրների վրայով։

Որպէս Հերեանի կամ Անցորդում այս անանուն նաւապետի նախատիպ ենթադրում է Երուանդ Գասպարեանը (1872-1946)՝ Սեւանայ լճի նաւազնացութեան հիմնադիրը Գասպարեանը, ինչպէս Հերեանը, երկար տարիներ ծառայել էր Սեւ ծովում, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինի մանդատով եկել Հայաստան եւ 1921ից ծառայել Սեւանայ լճում։ Այդ ժամանակ իշխանութիւնը Սեւանայ լճում նաւազնացութեան ծրագրեր էր մշակում, որի իրականացման պատասխանատուութիւնը դրում էր Գասպարեանի վրայ։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսաստանն Արսկովկասի ճանապարհով Իրան էր տանում մի նաւ՝ «Սետրիցա Նուշա» անունով, Ռումիա լճում օգտագործելու համար։ Սակայն տեղափոխութեան դժուարութիւնների պատճառով ռուսները հրաժարուել են այդ մտքից եւ նաւը թողել Երեւանի կայարանում։ «Սետրիցա Նուշա» նաւը, որը վերանուանուել է «Գեղանուշ» ունի հետաքրքրական պատմութիւն։ Ըստ ռուս արձակագիր Իւան Կատսեւի (1902-1939), Երուանդ Գասպարեանը հենց «Գեղանուշ» (յետագայում վերանուանուեց «Լուկաշին») նաւը Երեւանի կայարանից Սեւանայ լճ տեղափոխելու գործով է զբաղուել²⁶։

Կատսեւն առաջին անգամ Հայաստան աչքել է 1934ին՝ Նրան շատ դուր է եկել աշխատասէր, ջերմ հայ ժողովուրդը, եւ աչքելութիւնից յետոյ

նա մեծ եռանդով սկսել է ուսումնասիրել Հայաստանի անցեալն ու ներկան՝ կատակեր, նոյն թուականին, Քորհրդային Հայաստանի տասնչորսամեակին նուիրուած յօդուած է ներկայացրել *Նաշի Դաստիճաններ* (մեր ձեռքերումնիրը) ամսագրում՝ «Կապոյտ Սեւան» վերնագրով, որտեղ պատմել է Սեւանայ լճի նաւատորմիղի կապիտան Երուանդ Գասպարեանի մասին³⁰։ «Կապոյտ Սեւանը» յետագայում լոյս է տեսել «Հայրենիք» վերտառութեամբ եւ ընդգրկուել 1936ին Մոսկուայում լոյս տեսած Համանուն ժողովածուում։ Ըստ Կատակի՝ Գասպարեանը շատ ազնիւ, պարտաճանաչ ու պատասխանատու նաւապետ էր, բաւ ղեկավար ու կազմակերպիչ։ Նա երազում էր Սեւանայ լճի շրջակայքը բարեկարգել, որպէսզի այն դառնայ հետաքրքիր ու գրաւիչ վայր զբոսաշրջութեան համար։

Հետաքրքրական է, որ Կատակը նկարագրել է նաև տեղափոխման տեսարանը Նա գրում է. «Դա հզօր տեսարան էր, որ յիշեցնում էր Քէօպսի բուրգի շինարարութեան որոշ դրուագներ կամ Տրոյական պատերազմի օրերը, տեսարան, որի պատկերման համար մեր ժանգոտ գրիչը պիտանի չէ։ Բառայում էին եղները, ճոճուում էր սայլը, փոշին բարձրացել էր ամպի նման, հոծ բազմութիւն էր քայլում ցամաքում լողացող նաւի ետեւից։ Իսկ նա լողում էր, լողում անկանգ, բոցավառ արեւի տակ, մերկ բուրներին եւ ի սկզբանէ ցամաքային այդ երկրի ցանուցիւր քարակոյտերի միջով»³¹։

Կատակի նկարագրածը բնականաբար յիշեցնում է Հերեանի նաւի տեղափոխման տեսարանը։ Նաևի շուրջ յուզմունքով Հաւաքուած ամբոխը, եղները, սայլը, ամէն ինչ համընկնում է Չարեանի պատմածի հետ։ Նաև. «Հերեանի այն շարժարանքը, որ նաւը շոքս ժամուայ ընթացքում նոյնիսկ հինգ քայլ առաջ չէր շարժուում, ինչը շատ դժուար էր դարձնում Հերեանի նաւային ծրագրի իրականացումը»։

Գասպարեանը Հերեանի պէս Համրակազմ էւ «միջահասակ» մարդ է եղել։ Նա խորապէս սիրել է իր Հայրենիքը։ Եւ իրօք, Գասպարեանը շատ է նպաստել Սեւանայ լճի շրջանի տնտեսութեան զարգացմանը։ Գասպարեանի մասին գրած հեղինակներից մէկի՝ Հենրիկ Աբրահամեանի վկայութեամբ. «Նա արդարամիտ էր, ճշմարտացի եւ օրինապահ, կապիտանի թուլութիւնը Սեւանն էր, զա ուշացած եւ անդաւանան սէր էր։ Այն տարիներին մեր նաւազնացութիւնը երբեմն համեմատում էին որբանոցի հետ, որբերն էլ կապիտանի թուլութիւնն էին, նա նրանց բուրբին աշխատանքի ընդունեց»³²։

Հերեանը նոյնպէս նման բնատրութեան տէր մարդ է։ Նա էլ որբերի համար փորձում է աշխատանք ստեղծել, որը երևում է վէպի մի դրուագում։ Երբ Հերեանի նաւը հասել էր Երեւան, «ձրի թամաշայի» Հաւաքուած ամբոխը խանգարում է նաւի առաջընթացը։ Սակայն աշնանամուտ

է, նրան ծառայող գիւղացիները, վերադառնում են տուն՝ բերք հաւաքելու: Միտմանակ նաւը քաշող եզներից մէկը սատկում է: Անհրաժեշտ է դառնում մտակայ գիւղից նոր ելք բերել: Սակայն նաւը չհսկուած թողնելը վտանգաւոր էր: Հերեանը որոշում է մտենայ այն երեք տղաներին, որոնք նախկինում Հերեանի վրայ էին յարձակուել: Նա մտտեցում է նրանց ո՛չ թէ նախատելու նպատակով, այլ խնդրելու, որ իր բացակայութեան ժամանակ հսկեն նաւը: Եւ առաջարկում է դրա դիմաց հատուցել, հացի փող տալ, հագուստ ճարել, եւ երբ նաւը տեղ հասնի՝ դործ տալ եւ մարդ զարձնել նրանց: Հերեանը շարունակում է. «Ես ձեզ համար հայր կը լինեմ եւ դուք էլ անպաշտպան որբ չէք լինի, այլ պարտաճանաչ, ազնիւ տղաներ...» (էջ 208):

Գասպարեանի հոգատարութիւնը փոքր լծի նկատմամբ, ծագում է այն մտքից, որ նա կարելորում է Սեւանայ լճի ջրի դերը. «Ինչու» խղճուկ անապատը բռնկւում է յանկարծ թանկարժէք այգիների կանաչ բոցով, խկ քարէ լիբան վրայ բարձրանում է արդիւնաբերութեան օազմ՝ սը: Որտե՛ղ է ուժը, որ արթնացնում է թաքնուած, անթեղուած հարստութիւնները: Տարբերի անու՛նը, որ կեանքի է կոչում Հայաստանի մեռած անդամները: Զու՛ր՝»³¹:

Նաւը Հերեան վրայ վէշուում Հերեանը համանման կարծիք է յայտնում. «Դու երեւակայու՛մ ես ինչ կը լինէր ժայռերի այս աշխարհը, եթէ Սեւանը չլինէր... Մտածի՛ր. երկու հազար մետր ծովից բարձր, լեռների կատարին թառած նստած այդ լինը՝ լաւագոյն դանձն է որ մեր երկիրը ունի... Զուր կարած երկնքի մի կտոր.. Չնայած սիրերեան ցրտին՝ երբէք ամբողջապէս չի սառչում, որովհետեւ մարդիկ իր առատ սեղանից կարողանան օգտուել ողջ տարին: Եւ ի՛նչ կը լինէին վարի դաշտերը առանց նրան.. Չէին բուսանի մեր վաթսուռ տեսակ խաղողները, մեր հիւթեղ դեղձերը, օսկէ հեղուկով լեցած մեր ծիրանները, սալորը, խնձորը, նուշը... Նա է չէ՞, Սեւանն է, չէ՞, որ իր ափի մի ծալըր կամաց բաց է անում եւ զնդացող, ուրախ Չանգուին դրկում դէպի Արարատեան դաշտը... Նա է շոգիանում եւ անձրեւների միջոցով տարածւում ամէն տեղ...» (էջ 118): Հերեանի այս խօսքերը յսկով, Զուարթը մինչեւ անգամ խանդի զգացում է ունենում: Եւ Գասպարեանի, եւ՛ Հերեանի համար Սեւանայ լճը աղքատ Հայաստանը հարստացնելու գործում կարելորագոյն դեր է խաղում:

Երկու նաւավարների ճակատագրերն էլ նման են: Գասպարեանը երկար տարիներ օտար ծովում ծառայելուց յետոյ գալիս է իր հայրենիքը, մեծ ջանքեր թափում Սեւանայ լճի նաւազնացութեան գործի հիմնադրութեան համար: Սակայն յետագայ տարիներին, խորհրդային կառավարութեան անխուճեմ քաղաքականութեան պատճառով, լճի էկոլոգիական վիճակը վատթարացաւ: Յայտնի փաստ է, որ Սեւանում հիմնադրելով հիդ-

րոէլեկտրական՝ լծի մակարդակը տարէցտարի ցածրացաւ, կղզին դարձաւ թիրակղզի Արդէն 1990ականներին, իշխանութիւնները սկսեցին լծի մի զգալի մասը թաղել՝ վրան կառուցելով զանազան շինութիւններ՝ Ի դէպ, Սեւանի բնապահպանական խնդիրներն արդէն սկսել էին ի յայտ գալ Նաւը Լճրան Վրայ վէպը լոյս տեսնելուց առաջ²⁵։ Այդ վտանգը տեսել է Երուանդ Գասպարեանն ինքը, որը մեծ ջանքերով տարբեր նաւեր է բերել-հասցրել Սեւան՝ Բաքուից ու Բաթումից։ Նա հասկանում է, որ եթէ Սեւանայ լիճը դատապարտուած է անհետացման՝ իր ջանքերն իդուր կը լինեն։ Կատասեւը շարունակում է. «Բայց դա դեռ ամէնը չէ, Կարեւորը կորում է, կրկին անհետանում է օր ծերութեան գոնուած հայրենիքը, Ծովային հայրենիքը մի նաւաստու, որ քսանութ տարի թափառել է օտար երկրում, օտար դրօշների ներքոյ Մեռում է հայկական ծովը եւ նրա հետ՝ հանրապետութեան միակ նաւատորմիդը, այնպիսի դժուարութիւններով ու ջանքերով մեռք բերուած նաւատորմիդը²⁶»։

Այսպիսով, Նաւը Լճրան Վրայ վէպի հրատարակութիւնից ինը տարի առաջ, Կատասեւը գրել է Գասպարեանի կեանքի մի հատուածը Գասպարեանի գերեզմանը գտնուած է Սեւանի կղզու բլուրի վրայ, եւ Սեւան քաղաքում կայ նրա անուան հրապարակ։ Սեպ հաւանական չի թւում, թէ Զարեանը ծանօթ է եղել Կատասեւի՝ Նաչի Դաստիճեմեան հանդէսում հրատարակած այս յօդուածին, սակայն փաստ է, որ Գասպարեանի եւ Լեւոնեանի միջեւ առկայ են մի շարք ընդհանրութիւններ։ Եւ ոչ միայն արտաքինի կամ բնաւորութեան մէջ է նրանց նմանութիւնը, այլեւ ճակատագրերի Գասպարեանը Սեւանայ լիճը կորցնելու վտանգով է ապրում, իսկ Լեւոնեանը՝ հանրապետութիւնը եւ նաւը. դրանք երկուսի համար էլ եղել են կեանք եւ ունեցել են ճեղքի իմաստը։

Կարեւոր է լինել նաեւ հետեւեալ փաստը. Զարեանն ամենայն հաւանականութեամբ իր հերոսի անունը վերցրել է 1910ականների վերջի 1920ականների սկզբի մէկ այլ հայրենաստուէր կամաւորի՝ Ռուբէն Լեւոնեանի անունից։ Վերջինս անձնուէր աշխատանքներ է կատարել Արեւելեան Հայաստանի որբերի համար եւ մահացել է 1921ին²⁷։ Ձի բացատուում, որ վերցնելով նրա բարեհունել ազգանունը՝ Զարեանը մտադրուած լինէր յաւերժացնել նաեւ այդ գործչի յիշատակը։ Լեւոնեան ազգանունան հետ կապուած, չի կարելի նկատի չառնել Վարդան Մատթէոսեանի այն կարծիքը, որի համաձայն Զարեանն այն վերցրել է Պլատոնի Հանրապետութիւն գրքում նշուած հայազգի «Էրի» անուանումից (Հ-ի աւելացումով)²⁸։

Այսպիսով, թէեւ Նաւը Լճրան Վրայն պատմական վէպ չէ, այնուամենայնիւ նրա մի քանի կերպարներ ունեցել են պատմական նախատիպեր։ Նոյնիսկ վէպի սիւժէն՝ նաւի շինութիւնն ու տեղափոխութիւնը յի-

րուրանք չէ, այլ Հեղինակի Հաւաքած իրական փաստերի հիւսուածքն է: Այս առումով, կարելի է համարել, որ Զարեանը վերկենդանացրել է այն ամէնը, որոնք ժամանակի ընթացքում կը մոռացուէին: Հայ լինելու Հարցերի շուրջ իւրաքանչիւր կերպարի մօտ դրսևորուած են տարբեր կարծիքներ, որոնք նոյնպէս արտացոլում են դժուար արդ ժամանակաշրջանում ապրող Հայերի հոգեբանութիւնը: Իրական անձերի ու դէպքերի հիման վրայ վէպը աւելի համոզիչ է դարձել ու կենդանի շունչ ստացել:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Կասան Զարեան, *Երբէք*, Հրատարակութիւն Գէորգ Մելիքիների Գրական Մրցանակի եւ Վերահրատարակման Հիմնադրամի յանձնաժողովի, Անիիկիա, 1976, էջ 49.

² Նոյն, էջ 50.

³ Կասան Զարեան, *Նաւատուր*, Սարգիս Խաչինց հրատ., Երևան, 1999, էջ 687. Ի դէպ, *Նաւը վերջին դուրիս*, Հեղինակի համաձայնութեամբ, տեղ չի դառել վէպի ուսուերին Բարգմանութեան մէջ:

⁴ Արմրուհ Աւագան, *Կասան Զարեան. փանջը Ծ. Գործը*, Երևանի Համալսարանի Հրատարակութիւն, Երևան, 1998, էջ 38.

⁵ Hamparsum Kcilikian, "An Encounter in California", *Ararat*, Spring 1994, էջ 46.

⁶ *Ճուտարկիզ (ազգաբաղադատութիւն)*, Ի. դարի սկզբին ձեւաւորուած գրական Հասանդաւելի մանրամասն տն'ա՝ *Ճուտարկիզի սկզբունքը*, *Փայք Գրականութեան Տարեգրք Զրամահայ Գրողներու Լեհիկոնցութեան*, Փարիզ, հ. 3, 1993, էջ 130.

⁷ Կասան Զարեան, *Նաւը Լիբան Վրայ*, Բոստոն, 1943, էջ 167. Վէպից կատարուող բարձր մէթրիքումների էջերն այսուհետեւ կը նշուեն շարադրանքում.

⁸ *Կարալի մասին տն'ա՝ Գրիգոր Փրշեան*, *Վէպիական Ազգաբաղադատութիւն. Կարա Գարալի Առթիւ*, Փայք, էջ 97-120.

⁹ Զարեան, *Երբէք*, էջ 94.

¹⁰ Նոյն.

¹¹ Նոյն.

¹² Սենեքրիտ-Յովհաննէս Արմրուհի, *Վասպուրականի Հարց Թագաւոր (988-1028)*.

¹³ S.N. H.F.B. Lynch, *Armenia Travels and Studies*, vol. 1: *The Russian Provinces*, Beirut, 1965, էջ 287-298, vol. 2: *The Turkish Provinces*, էջ 116.

¹⁴ Զարեան, *Երբէք*, էջ 206.

¹⁵ Նոյն.

¹⁶ *Անցորդում Թուամանների կառուցած Նաւը կոչուում է Վերջան Երկաթ*, իսկ *Նաւում Վէպու Երկաթ*. Վերջան Երկաթն անուշը հանդէս է գալիս միայն *Անցորդում*, մինչդեռ *Վէպու Երկաթ* անուշը լինում է տարբեր տեղերում եւ հաւանական է, որ լինի *Նաւի* իսկական անուշը. տն'ա նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութեան Գաղտնիքի Գետական Կենտրոնական Արխիւ* (ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ ՄԾ, ցուցակ 1, գործ 79, թուղթ 62; Սխման Վրացեան, *Հայաստանի Հանրապետութեան Բ. սպազութիւն*, Բէյրութ, 1998, էջ 435.

¹⁷ Գաղտնական տարիներում մեղ չի հանդիպել *Անցարտուած անուշով Նաւ Սիւանում*. Համարաբար Զարեանի ստեղծած անունն է այն.

¹⁸ S.N. ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ ՄԾ, ց-1, գ. 79, թ. 62.

¹⁹ Այժմ վերանուանուած Սիւան:

²⁰ ՏՆ՝ ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 276, ց-1, պ-79, ք-83:

²¹ Նոյն:

²² Միսն Վրացեան, Գեանթթ Ուղիներով, Ա. Հատոր, ՎՅուսարքոյ Գահիրէ, 1906, էջ 223:

²³ Նոյն:

²⁴ Նոյն, էջ 223:

²⁵ ՏՆ՝ Միսն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 436:

²⁶ Նոյն:

²⁷ Աւագեան, էջ 262:

²⁸ ՏՆ՝ Ivan Kataev, *Khibi i mysl* (Հայ եւ միտք), Լենինգրատ (Լենինգրադ), 1983, էջ 273-302 եւ Հենրիկ Աբրահամեան, *Քարգէտ*, Երևան, 1998, էջ 118-128; Մուրադ Կարապետեան, *Հայաստանի Հանրապետութեան Քանդեր 1918-1920*, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատարակչութիւն, Երևան, 1996, էջ 40, 60-61:

²⁹ Ivan Kataev, *Khibi*, էջ 393:

³⁰ Նոյն, էջ 282-283. Բարգամուսիւնը՝ Աբրահամեան, *Քարգէտ*, էջ 121-122:

³¹ Աբրահամեան, *Քարգէտ*, էջ 126:

³² Ivan Kataev, *Khibi*, էջ 290:

³³ Մեանի Հիմարեանի պատմութիւնը տն՝ Գրիգոր Աբրահամեան, *Մեան*, Երևան, 1998, էջ 134-152:

³⁴ Նոյն, էջ 290:

³⁵ Թուրքն Հերեանի մասին տն՝ Վերջին Լուր, Մասնաթուղ, 9.07.1921, էջ 3; ԵԱՊՐԵՐԻՍ. Հայր Թուրքն Հերեանի Արխիէն, *Քարգէտը Քարգէտի*, Պէյրուս, 1963, էջ 211-214:

³⁶ ՏՆ՝ Վարդան Մամիկոնեան, *Երկերումներ Նուրն Եւրջի*, Կարթ, էջ 80-96. Վէպի կերպարների պատմական ձեկնարանութեան մասին, տն՝ Վարդան Մամիկոնեան, *Գոտան Քարգէտի Եւրջի*, Ամիլիան, 1998, էջ 371-374:

HISTORICAL CHARACTERS IN KOSTAN ZARIAN'S NOVEL,
THE SHIP ON THE MOUNTAIN
(Summary)

AKIKO HIKI

Although the renowned Armenian author Kostan Zarian has clearly stated that his masterpiece, *The Ship on the Mountain* (published in 1943 in Boston, revised version published in 1963 in Yerevan) is not a historical novel, it is based on certain historical characters, facts and details.

Against the backdrop of the historical period of 1918-1921, when the Republic of Armenia was proclaimed, the author unfolds the story of two Armenians who contribute in the reconstruction of their fatherland through realizing their separate marine projects on lake Sevan.

This article endeavors to trace the historical figures and prototypes, facts and details reflected in this novel. Some of them are the nationalist Catholicos, Mekertich Kherimian; the futurist poet, Kara Dervish; the naval captain Michael Tumanian, captain of the ship "Ashot Yerkat," which he brings from Batum to lake Sevan; and captain Ara Herian, the main character of the novel, who builds a ship on lake Sevan.